

ՄԵՆԿ

Տարեկան գինը 3 րուբլ, կես տարեկանը 3 րուբլ

Թիֆլիսում գրվում են խմբագրատները, պ. Ծառուքեանի և Արամյանների խմբագրատները:

Օտարադարձակից զինում են ուղղակի

Թիֆլիս, Редакция, Мшакс

Խմբագրատները բաց է առաջ տեսան 10-2 ֆունտ (բայի կիրակի և տոն օրերից):
Թայտարարությունները ընդունվում են ամեն չեզոք օր:
Թայտարարությունները համար վճարում են իւրաքանչիւր ըստ 2 կոպեկի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՕՏ անտարբեր լինելու համար
Միջոց երբեք և բոլոր տեղերում և օրերում
եռամսեայ հանդիսի լեզունը Երբեք լուրերը
Արտաքին տեղերում և օրերում Երբեք լուրերը
Կ. Պոլսից Երբեք լուրերը Երբեք լուրերը
Արտաքին լուրերը Երբեք լուրերը Երբեք լուրերը
Երբեք լուրերը Երբեք լուրերը Երբեք լուրերը
Երբեք լուրերը Երբեք լուրերը Երբեք լուրերը

ՄԻՆՁՆԻ ՆԵՐ
I
Մահապանակությունը և տան և իննե-
րորդ դարի զարգացումը անհարկն է իրար
հետ հաշտեցնել մահապանակությունը և
անընդհատ առաջադիմությունը չեն կարող
ձեռք ձեռքի տուած ընթանալ...

Այն զվարճող սկզբները որոնց վրա կա-
յանում է ժամանակակից քաղաքակրթված
մարդկային հասարակությունը, չունի մահ-
մետականությունը: Ժամանակակից հասա-
րակություն հիմնական սկզբները որոնք
են, որ և կազմում են ժամանակակից պետա-
կան կազմակերպությունը զվարճող հիմքերը
անհատական զարգացում, աշխատանք,
և հաճախությունը:

Ահապանական զարգացման հիմքը ընտա-
նիքն է, իսկ մահապանակությունը հեր-
քում է ընտանիքը: Աշխատանքի անհրա-
ժեշտ պայմանը այն ձգտումն է, որ ստիպում է
մարդուն անկախար լինել իր մոտեր, բա-
րոյական և ներթափանց դրություն բարեխա-
ւայեղություն, իսկ մահապանակությունը ա-
սում է մարդուն ի զուր ևս աշխատում, ի զուր

ևս ձգտում քո անձի մասին հոգալու և քո
զբոսը թիւնը բարեխաւայեղություն, որովհետեւ ինչ
որ պատահելու է, արդեն նախատեսված
է աստուածային գործության կամքով... այդ
Ֆատուհի սարսափելի վարդապետությունը
սպանում է մարդու մեջ ամեն ձգտում գեղի
ստիպում աշխատանքը: Վերջապէս հաւա-
սարկություն սկիզբը հակառակ է մահ-
մետականության, որովհետեւ իւրաքանչիւր
մահապանակալ պարտաւոր է, զօրանի վար-
դապետությունը հետեւելով, ամեն ուրիշ
դաւանություն, ամեն ուրիշ համոզմունք իր
դաւանությունից, իր համոզմունքից ստոր հա-
մարել:

Այդ տեսակ հանգամանքներում անհա-
րկն է մոտեր, բարոյական և տնտեսական
առաջադիմությունը:

II
Հայերը չայտնաբերում և փոքր-Ասիայում
ընկած լինելով այդ անշարժ, մոլորանք, ա-
ռաջադիմությունը անընդունակ և քաղա-
քակրթության թշնամի տարրի ազդեցու-
թեան տակ, բոլորովին առանձնացած և շրջ-
ջապատված են վայրենի, կողոպուիչ, հարստա-
հարող ցեղերով... Թիւրքաց տերությունը որ
անընդունակ է բացարձակ և պարզ կերպով
զիմել ճշմարիտ լուսնադրությունը, անըն-
դունակ է և քաղաքական քաղաքակրթության
լուսնադրությունը, ինչուհետեւ կարողացաւ որպէս
Աղբակի արժանի աշակերտ, բնորոշել այդ
վերջինից միայն նրա անարժան կողմերը, նրա
նեղատես և խորհրդայն քաղաքակրթությունը:
Թիւրքաց տերությունը փոքր-Ասիայի հայերի

վերաբերությունը հետեւում է հետեւեալ
քաղաքականության եղանակին՝ աշխատել
երկրաւորությունը ևս մոռանալ հպատակ ցե-
ղերի մեջ, նրանց միմեանց հետ կուսակցել
նոցա փոխադարձ ոյժերը թուլացնելու հա-
մար: Փոքր-Ասիայի նահապետներին տերու-
թեան կողմից գաղանի հրաման է արված
ընտելցնել քրիստոնէի հայերի զիւղերի մօտ,
որպէս զի այդ վերջինները հարստահարվին,
ճշմունք, բռնապետվին, նրանց կանայքն ու
աղջիկները բռնաբարվին բարբարոսներից, նը-
րանց հողերը փոքր առ փոքր անցնեն քրի-
զերի ձեռքը: Հայը ճշմունք է, հայ երկրա-
գործը անտեսական կողմից էլ հարստահար-
ված է: Քիւրդը կողոպուում է աւաղակութիւն
է անում և հարստանում է: Քիւրդերի մեջ
այժմ կան ամենահարուստ մարդիկ: Հայը
հանգստութիւն չունի, հայի կյանքածնները
կողոպուում է, ոչնչացնում է քրիստոնէի և դար-
ձեալ քրիստոնէի պէտք է զիմել աղքատացած
հայը պարսեղով փող առնելու համար, վճա-
րելով ահագին տոկոսներ... Հայի բաշտը
փչացած է, հունձը պրկած է, առնել
քանդված է, կինն ու աղջիկը անարգված են,
և ինքն պարտքերի մեջ է ընկած և քիւրդ
բէյի ձեռքում արուկ է դարձած, որովհետեւ
նրանից դուժմաք է փոխ առած իր տնտեսա-
կան, իր երկրագործական պիտոյքների համար:
Այդ պարտքերից հայ երկրագործին անհա-
րկն է դուրս գալ... Այդ է պատճառը որ
հայը գաղթում է և երեւի մի բան կամ
երեսուն տարից յետոյ էլ հայ չի մնայ Հա-
յաստանում...

III
Եւ կան զեռ բթամիտ մարդիկ, որք բա-
րոյում են հային համբերություն, յափշտա-
կում են անկրթագործներ ջնորքներով որ մի
անգամ հայը առաջին դեր կը խաղայ թիւր-
քիայում, կամ զոնե իրագործված կը տես-
նեն մի հայոց-թիւրքաց պետություն...

Բայց մինչև երբ հայը պէտք է համբերէ,
մինչև երբ պէտք է սպասէ այդ քաղաքական
նոր կազմակերպությունը հասնելու համար...
Մինչև որ տաճիկը կը զարգանայ, կը քաղա-
քակրթվի... բայց մինչև այն ժամանակ հայի
անուան էլ չի մնայ փոքր-Ասիայում:

IV
Երբեք պատմութեան մեջ տեսած չէք
որ մի ազգ, հպատակ լինելով մի օտար, մա-
նուանդ իրանից ստոր, զարգացման պետու-
թեան առաջ գնար, զարգանար, ապահովէր
իրան, իրաւունքներ ստանար՝ հուլ, ստրկային,
անպայման հաղապետութեամբ, առանց թրեք
իր իրաւունքները պահանջելու...

V
Մենք ասում ենք՝ տունը քանդվում է,
ընկնում, աւերակ դառնալով, փուլ դալով
վրա է, շուտով դուրս եկէք այնտեղից, եր-
կաթը ձեռքի քանդեցէք նրա ճուռ, սպառ-
նող պատերը, թէ՛ ու ամենքդ էլ նրա
աւերակների տակ կը մնաք, իսկ նրան քան-
դելու ժամանակ դուք և ձեզանից շատերը
կը զոհվին, կը սպանվին զինքն ընկած ա-
ղուկների և զերանների ծանրութեան տակ,
բայց դարձեալ շատերը և ոչ թէ ամենքը...
Իսկ մեզ պատասխանում են՝ այդ յնորք է,
լաւ է համբերեն քանդվող տան բնակիչները,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԵՄՈՒՆ ՏԱՐՈՒՑ ԹԵՏՈՑ

I
Երեսուն տարի կայ, որ հայ հասարակությունը
զարթելով իւր քնից սկսեց ուղարկել իր գաւակ-
ներին համալսարաններ: Չբխօսեմք այն բանի
վրա, թէ ինչից էր դրոշմ մեր հասարակությունը
այդ անգամ՝ օժտված թէ օքիաւքից: Այս քան
միայն գիտեմք, թէ երեսուն տարի կայ, որ մեր
հայ երկրասարգությունը չը բնականաւորով միջ-
նախարդ ուսումով սկսել է մանկ, յաճախել ևւ-
րօպական համալսարաններ: Երեսուն տարի կայ,
որ թէ ռուսահպատակ և թէ տաճիկահպատակ հայ
հասարակության մեջ սկսել է գոյութիւն ունենալ,
երեսուն համալսարանական տարրը:

II
Եւրօպայ, համալսարան՝ լաւ խօսքեր են Այս,
այդտեղ է եղել և ներկայումս էլ այդտեղ է ճը-
մարիտ կենալը: այդտեղ են քարոզվել և քարոզ-
վում նոր, ազատամիտ, անդադար առաջադէմ
ապագայ երջանկության գաղափարներն ու միտ-
քերը: Այս, այդտեղ գիտեն մարդ լինել և մար-
դիկ ունենալ: այդտեղ՝ Եւրօպայում գիտեն մա-
կել ամեն տեսակ սկզբունք ընդհանուր մարդկու-
թեան լայն կեանքի համար:

III
Բայց ինչ է արել տարիներով համալսարաններ,
Եւրօպայ յաճախող հայ ուսանողութիւնը, ինչ՝ Ար-
դեօք զգացել է այն բնական պարտաւորութիւնը,
թէ գտնուելով այդ անդադար քաղաքակրթող
տեղում՝ պէտք է աշխատել միջնորդ լինել սիրելի
հայրենիքի և Եւրօպայի ցանկալի ու նախանձելի
շարահրերութիւնների թարգման լինելով նոր, թարմ

մտքերի և յիշատակութեան արժանի երեւոյթ-
ներով կամ համարել է արդեօք այդ պարտա-
ւորութիւնը մի տեսակ պատմական աւանդութիւն
գիտնալով որ մերձեք ճիշդագործ դարձւում հա-
խանձել են Եւրօպայի հիմնգործը դարձւում քաղա-
քակրթութեանը, իսկ ինքը՝ ուսանողութիւնը (և
ոչ թէ մեր խնդր հոգեբանականութիւնը) որպէս
նոցա արժանի ժառանգ պիտի նախանձէ տա-
նութիւնները դարձւում վերջերի և քանակաբարձի քա-
ղաքակրթութեանն ու առաջադիմութեանը: Եւ
այդ բարի նախանձով երկրասարգ, կենդանի, լու-
սաւոր ոյժի համաժառ արխանդ այնտեղից փո-
խարկել հայրենի հողի վրա քանդ ու ծաղկող ծա-
ռերը...

IV
Ի հարկէ մենք չենք մոռանում արգելքները...
և միշտ կը յիշենք հայ հասարակութեան նախա-
պաշարմունքները, արդա միակողմանի և շատ ան-
գամ ծուռը դատողութիւնը, բայց միթէ մեր երե-
տասարդութիւնը այնքան տկար պիտի հանդիսա-
նար, որ չը կարողանար յայտնել համանման երե-
ւոյթներին: Ապա ինչու էր համարձակվում կրել
իր վրա ուսանող, երկրասարգ, լուսաւոր ոյժ
անունը: Ինչու իր համար դէվիլը չը լինեց՝ այն
բանը, թէ մրցելով պէտք է յայտնել նախապաշար-
մունքներին և մարդկային կեանքի խիսկան լցոյք
պէտք է տարածել հայ խաւար հասարակութեան
մէջ: Ապա ինչու համար էր ուսում առնում:

V
Ոչ, չը պէտք է թաղանթ, այլ բացայայտ կեր-
պով պէտք է խոստովանել այն աստիճանիկ մեղքը,
որ սկզբից մինչև հիմայ զործուած է հայ ուսանո-
ղութիւնը: Եւ այդ մեղքը և այդ ստոր սխալը
մի այնպիսի բիծ է, որ յաւիտեան կը մնայ դու-
ռօգի ձակաւոր վրա և ոչ մի բանով չէ կարող
լուսաւորել: Երկրասարգը տարիներով աշխատում
է, ուսում է առնում, յարմարվում է լուսաւոր,
քաղաքակրթութեան աշխարհի կեանքին, սկսում է
իր համար մտքեր, կարծիքներ և մինչև անգամ
սկզբունքներ ունենալ՝ չէ որ այն նպատակով որ

զայ և իր հայրենիքում գործ դնէ, ցոյց տայ, օրի-
նակ դառնայ ուրիշներին: Ի հարկէ, կը պատա-
խանէք դուք: Բայց միթէ այդպէս է եղել մինչև
հիմայ: Մենք չենք ուզում երկար խօսել: Ամեն-
քին լաւ յայտնի է և ակնատես են այն բանին,
թէ ինչպէս օտար երկրում ամենքն առաջն աղա-
տամիտ, առաջադէմ երեւող հայ երկրասարգը
զայլու է իր հայրենիք և օգուտ քաղելով հասա-
րակական կարծիքի բացակայութենից, փոխվում,
դաւնում է մի յետադէմ և մինչև անգամ անաղ-
նիւ, վնասակար մարդ...

VI
Այս երեւոյթը դժբաղդաբար պէտք է վերաբե-
րել մեր երեսուն տարեայ ուսանող երկրասար-
գութեանը:

VII
Ուրեմն չը պէտք է կարծել, թէ մեր երկրասար-
գութիւնը ցնայով Եւրօպայ կամեցել է տեսնել ճը-
մարիտ քաղաքակրթութեան, հասարակական կեանք:
Ուրեմն չը պէտք է հաւատալ, թէ հայ ուսանո-
ղութիւնը, գիտութեան սիրող համար է մտել համա-
սարան: Ուրեմն չը պէտք է խաբուել ուսանող
անունով, որովհետեւ նոր, թարմ, կենդանի, աշխոյժ,
առաջադէմ մարդ լինելու համար չէ կրել իր վրա
այդ անունը: Ոչ, այդպիսի բան չը կայ: Պէտք է
համոզուել որ այդ ամենը սահմանափակ, եսանիւ
չանքի, արտաքին ձեռքի և, ինչպէս պօսեցի հա-
յերը ասում են, օգէվելութեան համար է եղել
միայն:

VIII
Չէ, ցաւելով պէտք է ասել որ երեսուն տա-
րեայ ամբողջ հայ ուսանողութիւնը, որ երկրին և
քաղաքին էլ պատկանէր, ոչինչ չէ արել հայ հա-
սարակութեան համար, չէ հասկացել իր դերը:
Չէ, ցաւելով պէտք է խոստովանել, որ ամբողջ
երեսուն տարեայ հայ ուսանող երկրասարգու-
թիւնը մինչև այսօր կեանքի մի նշան չէ ցոյց
տուել, աշխատանքի, գիտութեան ու առաջադի-
մութեան գրօթակը ձեռքին չէ երկացել ասպա-
րէզում պատերազմելու ամեն վատ, վնասակար
ու թշուառ գործի դէմ: Եւ այսպիսի սառը աչքով,

անտարբեր, խուլ ակնշուքով մնաւ, անկենդան
ոգով ներկայ է գտնուել և պայտ էլ՝ երեսուն
տարեայ յետոյ, իր ժողովուրդին շարունակում է
նայել մեր առջև պատահող տեսարաններին...

IX
Երեսուն տարեայ հայ ուսանողութեանն ենք
պարտական, որ այսօր փարիզի նման ազատ քա-
ղաքում պօսեցի ռուսոսներին՝ սեղան գլուխները
չեն կարողանում ըմբռնել ընկերական ոգու գա-
ղափարը և փոխանակ հաստատ կազմակերպելու
մարդկային վսեմ յարաբերութիւնը, քանդում են
անասնաբար այդ սրբազան կապը: Ամօթ և կա-
ռասարակ խայտառակութիւն է այդ փարիզի հայ
ուսանողութեան համար, որ կարողութեան տաճիկա-
տանցի բթամիտ և ուղեղով ողորմելի երկրասարգ-
ները, Այս թէ ինչ հետեւներ ենք հանել երեսուն
տարեայ յետոյ...

X
Մի տեղ ստիպ է չը կայ կանան առանց բա-
ցաւորութեան: Եւ ճշմարիտ, թէպէտ երեսուն տա-
րեայ հայ ուսանողութիւնը ամեն տեսակ անար-
ժութիւնը իր համար կանան չինեց, բայց հետեւելով
առաջին մենք չառ ուրախ ենք տեսնելով բացա-
ռութիւն, որ կազմել է Վշակը լրագիրը: Այս ան-
հիմն տարի կայ, որ Վշակը յայտնում է և լու-
սով ենք կը շարունակէ յայտնել ու կատարել այն
ճշմարտութիւնը, այն ազնիւ միտքը, թէ ինչպիսի
ուսում, ինչպիսի գիտութիւն որ սովորեցանք և ինչ-
պիսի մարդ, անհատ որ եղանք օտար երկրում, Եւ-
րօպայում՝ պիտի շարունակենք մեր հայրենիքում
էլ աշխույս լինել: Հակառակ դէպքում մենք մար-
դիկ չենք կարող լինել, կի՛ն համոզուած ենք, որ մի
որ մեզ վրա անկողմնապաճ, անաշտ վճիռ պիտի
կարգադրուի:

XI
Այս, թէպէտ ոչ, թէպէտ երեսուն տարեայ
յետոյ, բայց ինչ կուզէ լինի՝ դարձեալ ուրախալի
է այս բացառական երեւոյթը:
Թարոյ

տունը ինքն իրան նորից կը պահպանուի, ծը-
ռած պատերը կը դրստվին, անձրեւի, ձիւնի
և հողմի ազդեցութեան տակ ժամանակով
նորից կը պնդանայ շինութիւնը...

Հայր շուն կը քաշէ թիւրքիայում միայն
այն ժամանակ, երբ տաճիկ տարրը և թիւր-
քաց տերութիւնը, կը լուսաւորվեն, — բայց
մահմետականութիւնը սկզբունքով հերքում է
լուսաւորութիւնը... Մինչև երբ սպա-
սն հայերը...

Դեռ պէտք է կորսել նախապաշարմունքը,
խոնարհել մահմետականութիւնը, եթաւար-
կել նրան ժամանակակից մտքերի ներգործու-
թեանը, — և ապա սպասել լուսաւորութեան
տարածումը թիւրքիայում...

Մինչև երբ...
Մի ժամանակ, այն կը լինի և այս, կը
լինի որ ընդհանուր մարդկային լուսաւորու-
թիւնը միտք կը գործէ և վայրենի ցեղերի
մէջ, — բայց երբ...

Երբ որ արդէն հայի անունը չի մնայ Հա-
յաստանում, երբ հայերի մի մաս զաղծված,
իսկ միւս մասը խառնված կը լինի տաճիկ-
ների և քիւրդերի մէջ...

Հայի լեզուն անհետանում է թիւրքիայում,
ամբողջ հայ գիւղեր գաղթում են անդադար,
միացողներից շատերը մահմետականութիւն
են ընդունում: Հայի հողերը անցնում են
հետադէտէ քիւրդերի և տաճիկների ձեռքը,
հայ երկրագործ դասը պարտքերից խեղդված,
գցում է հողը և հաւաքվում է քաղաքնե-
րում կամ գաղթում է օտար երկիրներ, Հա-
յաստանից դուրս, հայ կանայք և աղջիկները
բռնաբարվում են և գերի են տարվում քիւր-
դերի գիւղերը, — և հայուհուց ծնւում են ոչ
թէ հայ զաւակներ, այլ քիւրդ կամ տաճիկ
սերունդ...

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՓՈՐՁ» ԵՌԱՄԱՍԿԱՅ ԶԱՆԴԻՍԻ ԼԵՋՈՒՆ

Այդեալ անգամ խօսելով «Փորձի» առա-
ջին տետրակի բովանդակութեան և ուղղու-
թեան մասին, մենք տեղ չունեցանք մի քանի
նկատողութիւններ անել այդ հրատարակու-
թեան լեզուի մասին:

Պէտք է ասել որ լեզուն բովանդակու-
թեան նման է նա նոյնքան խառն և անսիւս-
տեմական է, որքան և նիւթերը... Բաւական
չէ որ իւրաքանչիւր գրողի լեզուն միւս գրողի
լեզուից տարբերվում է, բայց և ամեն մէկ
գրող իր գրվածքի մէջ անդադար իրան հա-
կառուում է, գործածելով մի անգամ աշ-
խարհաբար, միւս անգամ գրաբարի ձևերը:
Ձարմանակ է որ մինչև այժմ հայ գրողնե-
րից ոչ մէկը չը կարողացաւ դուռ աղապել
լեզուը, միտքը, կենդանի լեզուի զարգացումը
կապաղ, կաշխատող գրաբարի ձևերից: Գրա-
բարի ազդեցութիւնը այնքան տիրապետող է,
թէ և լեզուն բոլորովին մեռած է, որ հայ
գրողը, մանաւանդ նա որ մեռած մտքով է
յայտնում, չէ կարող ազատվել գրաբարի
ձևերը գործածելու նախապաշարմունքից, —
չը նայելով որ այդ մեռած և ժողովրդից
չը գործածվող գրաբարի ձևերի փոխա-
նակ արդէն կան հարուստ և զեղեցիկ աշ-
խարհաբարի ձևեր: Կախապաշարմունքը սգի-
տութեան յատկանիշն է: Մարդիկ մէկ կերպ
խօսում են, և ուրիշ կերպ են գրում: «Փորձի»
աշխատակիցները երբ խօսում են, ասում են
օրինակ՝ «Գնում քանիսն ինքն ինքն կարծիքով»
իսկ գրելու ժամանակ անպատճառ պէտք է
ասեն՝ յետ կարծեաց գնում քանիսն ինքն ինքն
(երես 177): Դուռնու ժամանակ կասին՝ «Հա-
յոց հոգեւորականութիւնը հիմնված լինելով
ընտրողական սկիզբների վրա, ամենայն հայոց
կաթողիկոսից սկսած մինչև ծխական քահա-
նան», իսկ գրելու ժամանակ անպատճառ
պէտք է այսպէս գրեն՝ «Հայոց հոգեւորակա-
նութիւնը լինելով հիմնուած ընտրողական

սկզբանց վերայ, սխալ ամենայն հայոց կա-
թողիկոսից մինչև ծխական քահանային» (երես
420): Գիտեն, օրինակ, որ աշխարհաբարում
ի վերջապետութիւն ունեցող գոյականները,
ինչպէս եկեղեցի, սեռականի մէջ ու են
ընդունում, և խօսելու ժամանակ ամենքն էլ
ասում են եկեղեցու շինութիւնը, — բայց
գրելու ժամանակ անպատճառ պէտք է գրեն
եկեղեցու, հողու և այլն... Օրինակ երես
168 «Ս. Գեորգ եկեղեցում վարդապետ, երբ
նորա Գովհանէն անունը փոխուեցաւ, ըստ
սովորութեան Հայաստանեայց եկեղեցու, կա-
րապետ»:

Պ. Յովհաննիսեանի յայտարարութիւնից
տեսնում ենք որ մի Վաղարշ Արշակունց ա-
նունով պարսն, որին խմբագիր-հրատարակ-
կիչը անուանում է «մեր բարեկամ», հակու է
«Փորձի» ստեղծութեան մարքութեան և ուղ-
ղագրութեան վրա... Ո՛ր է այդ Վաղարշ
Արշակունց անունով բարեկամը, որ խմբա-
գրութեան ուղղագրութեան վրա պէտք է
հակ... Նիւթ է այդ Վաղարշն է որ մէկ
երկու վեպ է գրել զաւառական լեզուով, իսկ
երբէք նոր աշխարհաբար գրական լեզուի մէջ
իրան չէ յայտնել ոչ մի աշխատութեամբ, —
դա հազիւ թէ կարող է հակել ուղղա-
գրութեան և միւս վրա: Նոր կազմվող կենդանի
լեզու մշակելու գործի մէջ բաւական չէ իմա-
նալ մի զաւառական լեզու: Սրբեք բացի
զաւառական բարբառից և զուցէ գրաբա-
րից (?) պ. Արշակունց գիտէ երազական մի
քանի լեզուներ, որ անուշտ հարկաւոր է
իմանալ հնդկա-եւրոպական ծիւղին պատկա-
նող մի նոր կենդանի լեզու, ինչպէս հայե-
րեն է, մշակելու համար: Նոր մի լեզու մշա-
կելու ժամանակ քիչ չէ օգնում և կարող
ենք ասել անհրաժեշտ հարկաւոր է եւրո-
պական լեզուների հմտութիւնը, որովհետեւ
նոր լեզուի մշակութեան աշխատանքը գլխա-
ւորապէս ուրիշ կենդանի, նոյն ծագումի լե-
զուների հետ համեմատական աշխատանքի
մէջն է կայանում: Նոր մի լեզու մշակելու
ժամանակ հարկաւոր է ոչ թէ միայն մի հին
լեզու իմանալ, ոչ թէ միայն քիչ շատ լե-
զուաբան լինել, — բայց հարկաւոր է կրթված,
զարգացած մարդ լինել գլխում Լճիկա
ունենալ: Լճիկիւ ձիւղ դատողութեան կա-
րողութիւնն է: Ամեն ձեւարարութիւն, ամեն
միտք վերաբերական է, — Լճիկան է վեր-
բերական է մի մարդ աւելի լճիկա ունի,
միւսը պակաս: Անտարական մարդիկ չը կան:
Հասկանալի է որ այն մարդը աւելի լճիկա-
կան կերպով զարգացած կը լինի, որ միջոց
կունենայ համեմատել աւելի շատ ձևեր,
աւելի շատ իրողութիւններ, աւելի շատ հմ-
տութիւններ միմեանց հետ: Լճիկիւ ուրիշ
բան չէ, եթէ ոչ բազմակողմանի զարգա-
ցումից ծնված բազմակողմանի, ուրեմն և
աւելի ձիւղ գաղափարներ: Բոլոր ձիւղ,
բնական, հասարակական, մի խօսքով բնու-
թեան ձիւղ օրէքների վրա հիմնված գի-
տութիւնները մշակելու համար հարկաւոր է
իմաստներ, ձևերի մեծ պաշար ունենալ: Այդ
ձևերը միմեանց հետ համեմատել կարողա-
նալու համար: Որքան ձևերի աւելի հարուստ
պաշար կունենաք ձեր ձեռքի տակ, նրանց
միմեանց հետ կը համեմատեք, — այնքան էլ
աւելի ձիւղ և ձեւարարութեան մօտ կը լինի
ձեր Լճիկան, այնքան աւելի կը աճէ և
մշակված կը լինի ձեր դատողութիւնը:
Անհարկ է մի կենդանի, եւրոպական ծա-
ղումին պատկանող նոր լեզու մշակել ոչ մի
մշակված եւրոպական լեզու չը գիտնալով,
ուրեմն միջոց չունենալով համեմատել որ-
քան կարելի է բազմաթիւ լեզուաբանական
ձևերը միմեանց հետ: Լեզուն, որ ձիւղին է
պատկանում նա ընդհանուր, բնական, հմտաւոր
օրէքների վրա է հիմնվում, ինչպէս միմա-
կազրական իրողութիւններ, կամ քիւրդիկա-
կան ձևեր և Ֆիդոյօգիական կազմակերպու-
թիւններ: Եստ անգամ կովկասեան սարերի
մի գեօլօգիական չը հետապնդված ձև որո-
շելու և բացատրելու համար, հարկաւոր է
համեմատել նրան զիցուք ալպեան սարերի
այս կամ այն համանման ձևի հետ...

Նոր գրական լեզուն երբէք մշակվում չէ,
եթէ նորա ընկան օրէքները, նորա ձևերը
հետադուրս և մշակելու համար ձեռքի
տակ կունենանք միմիայն մեռած գրաբար
լեզուի և մի զաւառական լեզուի ձևերի պա-
շարը:

Եթէ «Փորձի» յովածների մեծ մասի
լեզուն Վաղարշ Արշակունց է գրաւում, —
մեզ չէ զարմացնում որ այդ հրատարակու-
թեան լեզուն այնքան խառն, այնքան ան-
ձուռն է... Եւ ձեւարար գրվածների իւրա-
քանիւր քայլում պատահում է գրաբարի
մեռած, չը գործածվող, վերացական ծանր
ձևեր և յանկարծ նրանց հետ միասին ծայ-
րայեղ զաւառական նոյնպէս չը գործածվող
ձևեր:

Մենք Արթուրեանի լեզուն համարում ենք
գեղեցիկ դաւ առական լեզու, բայց չենք
կարող նոր գրական լեզու կազմելու ժա-
մանակ անպայման հետեւել նրա ձևերին:
Եթէ «Փորձի» մի քանի ձևերում անպայման
Արթուրեանի լեզուն է հետեւում, ինչպէս օրի-
նակ բացասական բայերի ներկայ ժամանա-
կում չի անում, չի գրում, չի գնում, փո-
խանակ չէ անում և այլն, ինչի չէ հետե-
ւում ուրեմն նրա մնացած ձևերին էլ օրի-
նակ՝ գնում ա, գալիս ա և այլն... Ուրեմն
դուք բայերը այդպէս կը խոնարհէք, ևս չեմ
ուզում, դու չես ուզում, նա չի ուզում,
մենք չենք ուզում, դուք չէք ուզում, նորա
չեմ ուզում: Եթէ հետեւում բար ուզում էք
վարդիկ պէտք է գործածել, ևս չեմ, դու
չես, նա չի, մենք չենք, դուք չէք, նրանք չեն:
Բայց Արթուրեան էլ շատ անգամ հաստատ
չէ այս կամ այն ձևը գործածելու մէջ: Մեծ
մասամբ նա գործ է ածում չի ուզում, չի
անում և այլն, իսկ մի քանի անգ, օրինակ
երես 183 «ով չէ... բուն փորում, մէջ մտ-
նում...» և այլն: «Փորձի» երկու զովածների
մէջ միայն, որոնց հեղինակները երեք չէին
թող տալ Արշակունցի պէս գիտնալիս ուղ-
ղել իրանց լեզու, մենք նկատել ենք որ այդ
ձևերը ձիւղ են գործածված և այնպէս ինչ-
պէս մենք ենք գործածում, այն է անպատեհի
համար չի, իսկ ներկայ ժամանակի համար
չէ: Այս երկու հեղինակները պ. պ. Պալաս-
սան և Բարխուդարեան են: Ահա ինչպէս գը-
րում է պ. Բարխուդարեան (երես 34):

«Այն, որ կարող է չի հնազանդի,
«Երբ որ կարող է իւր ուղածն անել:
«Այն, որ կարող է չի կամենում,
«Ամենաբժարող միայն այս երկունք»:

Նոյնպէս և Պալասսան (երես 399) «Հետքն
անգամ չի երևում այն ընդարձակ արտո-
նութիւնների»: Բայց ուրիշ կողմից ցույց է
որ պ. Պալասսան մի քանի ձևերի մէջ անդադար
իրան հակառակում է, օրինակ՝ «բերիւր, որ
են հայը, յոյն, տաճիկներ և արարներ»
(երես 408): Կամ այսպէս (երես 409) «ձե-
նօվայիներից և վենետիկներից», իսկ մի
քանի տողերից յետոյ նոյն երեսի վրա՝ «վե-
նետիկներ», վենետիկներ» «ձեւօվայիք» և
այլն:

Մի ժամանակ մեր սահմանափակ, ազգա-
սեր, հայկաբան անուանածները, չը կարո-
ղանալով ստողջ լայն, ժամանակակից մտքեր
յայտնել, միմիջարում էին իրանց նորանով,
որ ամենքից լու հայերեն են իմանում...
Այժմ երեւում է որ այդ վերջին միմիջարու-
թիւնն էլ չը պէտք է ունենան...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լճիկի զաւառի ամենայնպէս զեղեցիկ
չորհակալութեան նամակներ ենք տեսնում «Մա-
կար արքայիկայութիւն» գործունէութիւնը վերա-
գրով յօդվածի մասին: Մեկ չորհակալութիւն գոր-
ծիւր իրան բաժանորդ չեն «Մշակի» այլ մեր լրա-
գիր հին թիւթերը նրանց հասել են ձեռքից ձեռք
անցնելով: Կամակներ մէջ օրինակ այսպէս է աս-
ված՝ «Զէ կարելի ձեզ չորհակալութիւն չը յայտ-
նել, որ դու երեսն հանցիք, թէ և կարճ լայն
ձիւղ յօդվածում այդ անդադարական և ան-
շարժութեան հերոսի գործունէութիւնը»:

Լուռ ենք որ այս օրերս տաս բնասիւք Կ.
Պալասսան հայ արվեստագետներից եկել են թիւթիւթ:
Երեւում է որ Կ. Պալասի հայերի միջին դասի աշ-
խատողների համար թիւթիւթի մայրաքաղաքի մէջ
կենտրոն իր անձնական և անհատական անպա-
հովութեան կողմից այնքան անառնելի է դառ-
նում, որ հայերը այնպիսի սխալ են գաղթել:

ԲՈՒԹԱՅԻՄԻՏԻՑ գրում են վրաց «Դրոբա» լրա-
գրին որ ուսուցիչ սուրբ Սիմեոն թողարկել է Բու-
թիստում մի հոգեբանական դպրոց, սեմինարիա,
բայց անել:

ԹԻՖԼԻՍԻ արվեստագետների ժողովը յուլիսի
4-ին դուռնի դաշխում իր ունեցած ընդհանուր
ժողովի նստի մէջ ընտրել հետեւեղ 12 ստա-
չիւն ա) Գր. Արքայիկայ, 2) Գ. Գեօրգիւնի, 3) Լ.
Լուցիկ, 4) Ի. Խա. Մ. Բեհլուկեան, 5) Ա.
Կապանաձէ, 6) Ի. Սարգսյան, 7) Է. Զօմէր,
8) Ա. Կիլիսէ, 9) Ի. Բաղատարով, 10) Դ. Լա-
սիւն, 11) Գ. Գեօրգի, 12) Գ. Զեփեան: Բայց այդ
տասնեկուսուց անդամներից ընտրվեցան և 12
կանդիդատներ:

Այս օրերս հասաւ ԹԻՖԼԻՍ և մի քանի ներ-
կայացումներ տուեց ֆրանսիական երգիչներ և
պարիկոսներ մի խումբ: Այդ խմբի կանայք այն
ձևի երգիչներ են, որ մեզ զարմացնում է թէ նրանց
թող տուեցին թատրոնի մէջ երգելու Այդ երգիչ
թիւթիւթ և միջին անգամ կանայք անկախ երգիչ-
գութիւնը կարելի է թող տալ քաղաքից դուրս
գտնվող մի օր և է այդի մէջ... Առաջին ներկա-

յացմանը մի քանի ընտանիքներ կային, բայց եր-
կորդ անգամ թոմարը դատարի էին: Այժմ Լու-
սում ենք որ թատրոնի կառավարութիւնը արդէն
արգելի է այդ կանայց թատրոնի և նրա այգու
մէջ երգելու: Ամեն բանորր տեղը պիտի ունենայ:

ՄՈՒԿԻՍԱՆ գիւղից ստացանք բժիշկ Մի-
րի ժամեանից Զաքարիայի հրդեհից վնասված-
ների համար 2 ռուբլ 50 կոպ., և նոյն պարունից
Երեսնի հրդեհից վնասվածների համար նոյնպէս
2 ռ. 50 կոպէկ:

ԲԱՅՈՒԻ ընտանիք, Մաշաթի Սափար-Ալի խալի-
ֆայի-օղլի անունով մի պարսիկ նորերում 20
րուբլ է ընծայել Գիւրգի զիւզի հայոց ուսումնա-
րանին, իսկ այս օրերս նոյն պարսիկ ազգական է
«Մաշաթի խալիֆայի» անունով պ. Պալասսանի
խանի ձեռքով 10 ռուբլ որ այդ փողով գնելու
թիւթիւթում մի քանի հայերն, որքան ընթերցա-
նութեան համար և ուղարկելու Գիւրգի զիւզի այն-
պիսի օր ուսումնարանի աղքատ մանուկներին
բաժանելու համար:

Այս օրերս հասաւ ԹԻՖԼԻՍ Պեանրուրդի
նշաւաւոր արվեստագետ պիկտոր Կ. Կ. Կ. Կ. Կ.
երկու անգամ անգամ այստեղ թատրոնում գրա-
կանական և Երկիւրի տուել: Պարսիկ կար-
դացած ուսուցիչն անուանողութիւնները այլ և
այլ բովանդակութիւն ունենէին՝ միւր ողորդական,
միւր ծաղրական, — բայց բոլորն էլ պ. Միկայիլ
անունով ստացանով կարողաւ: Հասարակութիւնը
բազմաթիւ չէր թատրոնում, բայց ամենի ուշա-
դրութիւնը լարված էր ընթերցանութեան ամբողջ
ժամանակի: Հասարակութիւնը անդադար ծափա-
հարում էր և կրկնէր իր տալիս:

Վիճակաւոր առաջնորդ սրբ. Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
քեյիկալաւոր Ս. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե.
դառնալուց յետոյ, կրկին թողեց մեր քաղաքը և
գնաց Ախալցխա:

ՄՈՒԿԱՅԻՑ մեզ գրում են «Մշակի» № 24
սկսած իր առաջնորդը յօդուածից և վերջացնելով
իր թղթակցութիւններով, յայտնելով մի քանի ըն-
տանիքներում և վաճառականների վրա մեծ աղա-
ւորութիւն գործելու և մեծ համակրութիւն գտաւ:
Այդ համար իսկ արտադրատիւն էր մեր հա-
յերի մեծ մասի սրտի զգացմունքների և նրա կե-
տելը նշանակում էր բաւականութեամբ տալ ժող-
վրդին աղաքական խօսքի միջոցով և աւելի որոշ
կերպով բացատրել հասարակութեանը նրա թիւթ-
քարակալ երգիչների ներկայ ամսթիւթը
դրութիւնը: Վերջին ժամանակներս նոյնպէս հա-
մակրութեամբ ընդունվեցան «Մշակի» յօդվածները
ուսուցչական դպրոցի հարցի մասին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐԻՍ

Վերջին ժամանակները, ինչպէս մեզ գը-
րում են Կ. Պալասի, այդտեղից հայոց և թիւրքաց
լրագրութիւնը սխալ է տպել այնքան անա-
մօթ, ծիծաղելի և լիքով լուրեր Ռուսաս-
տանից, որ մենք, եթէ մեզ թող տրվէր,
անպատճառ հարկաւոր կը համարէինք ար-
տատպել այդ ցնորաբանութիւնները և արա-
բական առակները, այն նպատակով որ ցոյց
տանք թէ ինչ սեսակ որոգայթներ են լար-
վում թիւրքիայում հայաստանի հայերի օրից
որ դէպի Ռուսաստան աճող համակրութիւնը
խտախնկու համար: Բայց ի դուրսն այդ
ջանքերը: Այդ ուղղութեան մէջ ամեն ջափ
ու սահման անցել է Կ. Պալասի «Լրագիր» ան-
նունով թիւթիւթը: Ուրդմէլ լրագրութիւնը:

Կ. Պալասի մեզ գրում են այստեղ օտար մի
քանի թիւթեր և մի հայոց թիւթ անհա-
ւատալի լուրեր հարորդած են մեր վեհա-
փառ կաթողիկոսի վրա: Բաղդաւորապէս մնա-
ցած հայոց թիւթերը, չը սպասելով թէ
հերքվին այդ անտեղի լուրերը, իրանք սխա-
լեցին հերքել այն անամօթ լրագրից հարոր-
դած լուրերը: Կ. Պալասի վրդոցներում ան-
սովոր կենք է երևում՝ ամենքը գնաւորա-
վում են, կամաւորների դուռնի կազմվում են,
ամեն տեղ աճում է ականջներ, խաղաղ
երաժշտութիւնը: Կամաւոր գրողների թիւը
6400-ի է հասած, որոնց թիւում կան և
400 հայեր: Յոյները նոյնպէս կազմվում է
կամաւորների մի խումբ: Կամաւոր գրող
մօլեւանդ սօթիթաներ մի հրաւիրական նա-
մակ են ուղարկել քրիստոնէայ կամաւորների
մօտ, որտեղ մեզ համարելով քրիստոնեա-
նիւն և դըւայր կամ հայրենակից ա-
նունակ կոչում են նրանց՝ քրիստոնէայ ըն-
կերակիցներ, ասելով որ թիւ և կրօնքով և
ազգութեամբ տարբեր ենք, բայց քա-
ղաքականութեամբ մի ենք, ուրեմն միա-
նանք և գնանք պատերազմել մեր Վուլթանի
թշնամիների դէմ: Քրիստոնէայ կամաւորները
մի զբօշակ ստացան, որի մի կողմի վրա խաչ
է նկարված: Մենք մեր կողմից կաւեւաններ
որ արդէն ուշ է թիւրքաց տերութեան հա-
մար սխալ այժմ շողորդթիւթ, այն էլ այն-
քան անշնորհ կերպով, քրիստոնէաներին: Բա-

ւական է նոյնը այն բանի վրայ թէ ինչ
անասնի բարբարոսութիւններ են գործում
թիւրքաց զօրքերի ձեռքով սլալանական եր-
կրկնաբար, մանաւանդ Բոլորաբաշայում, որ հա-
մարտն էր թէ քրիստոնէական և մահմադական
միասին, ձեռք ձեռքի տուած ընկճանալ չեն
կարող։ Թիւրք զօրքերը մի քրիստոնէացի դիւղ
մանկուն պէս սլալանում են տներ, սպանում են
ձեռքերին, ջարդում են երեխաների գլխերը,
բռնաբարում են կանանց և աղջիկներին և
յետոյ դանակով կտրելով նրանց փորը, դնում
են խեղճերին կրակի մէջ, կապում են կանանց,
այրուհիներն տաքացրած ածուխով նրանց ծը-
ծերը, կարում են ծծերը, կեղանի գերիները
քիթեր և ականջներ են կտրում, դերիներին
հազարներով բռնել են դնում, որոնք այդ
խեղճերը մէկ միւսի վրայ դրելով, ոչ պար-
կել ոչ նստել կարող են և խեղճութեամբ
իրանց սեփական արտադրութիւնների օդի
մէջ։ Այդ առաջին դարերի պէս քրիստոնէա-
նորին կրած մարտիրոսութիւնները դեռ փոքր
մասը նկարագրած է լրագիրներում։ Թիւրքաց
զօրքի մէջ եղած և Եւրոպական ակադեմիա
թղթակցները տեսնում են թէ Եւրոպացի դեռ
համարեցողութիւն չունի թիւրքերի գործած
բոլոր բարբարոսութիւնների մասին։ Եւրո-
պան անտարբեր է նայում այդ բոլոր անց-
քերի վրայ, իսկ Անգլիան պաշտպանում է
թիւրքերին։ Թիւրքաց ժողովուրդը 500 տար-
վայ ընթացքում բնակիչներով Եւրոպայում
չէ լուսաւորուել, չէ արել ոչ մի բայք կեցիկ
առաջ, ոչինչ չէ մոռացել և ոչինչ չէ
սովորել։ Թիւրքերը 500 տարեց յետոյ էլ
նոյն բարբարոս, վայրենի, ջնգիւխտանի և
թաւմերկան մեղքորական իրաւունք, գաղանա-
կան ցեղ են մնացել։ Թող ուրեմն Թիւրքիայի
հայերը դարձնալ 500 տարի սպասեն և եթէ
բոլորովին չեն անհետանայ աշխարհին երեսից,
մնացողները կը տեսնեն որ 500 տարեց յե-
տոյ էլ Թիւրքերը նոյնը կը լինեն ինչ որ էին
500 տարի առաջ։ Եթէ մի ազգը, որ ցեղ
կարող է հինգ հարիւր տարեայ մէջ նոյն
գաղանական, վայրենի մնալ առանց մի ամե-
նախորդ առաջադիմութեան, լուսաւորութեան
նշով ցոյց տալու, այդ ազգը ընդունակ չէ բա-
ղաբար լինելու, եւ յոգուտ ընդհանուր մարդ-
կային երջանկութեան պէտք է ոչնչանայ, վե-
րանայ, անհետանայ աշխարհի երեսից։ Եթէ
հայերի, մարտիրոս քրիստոնէաների համար
միակ փրկութիւն է միանալ Ռուսաստանի
պետութեան հետ։ Ուրիշ էլ չի չի յիշուի
տարուց յետոյ ճանապարհորդը փոքր-Ասիա
յում, Հայաստանում, տեսնելով այդ երկրի
դաշտերում անթիւ քրիստոնէացի գերեզմա-
նատներ, ինչպէս Հնդկաստանում, կասէ այս-
տեղ։ Հայաստանում մի ժամանակ հայեր
էին բնակվում։ Անգլիան և Թիւրքիան նորա-
յարժանի աշակերտը նեղաւոր բարբարոս քա-
ղաքականութեան մէջ հայերի ամենամեծ
թշնամիներն են։ Այն քաղաքականութիւնը
որին Թիւրքիան այժմ հետևում է Հայաստա-
նում հայերին ու բոլորքերին միմեանց ուրիշ
չափել տալով, որ բոլորը միմեանքսն են, եր-
կիրը աւերակ դարձնէ և աւերակների վրա
անհմտաբարութիւնը հաստատէ։ Նոյնը ա-
նում էր և անում է Անգլիան Հնդկաստանում,
այնտեղի հայաստի ազգերը միմեանց մէջ
ոչնչացնել տալով, իր արդարաւորութիւնը հա-
տատելու համար։

ՆԱՍՏԱ Կ. ՊՈԼՈՒՅՈՒՆ

Յուլիսի 2-ին

Երբ ասվեցաւ թէ Թիւրքիան սա հման ա-
րդու թիւնը ընդունել և նոր ստիճանի գա-
նալը ճիշդագործելու, չտարեց կարծեցին թէ
Թիւրքիան իրկված է։ Բայց մի երկրի արտաքին
փոփոխութիւնը, կառավարութեան ամենայն և
քաղաքակրթութիւնը օրէնքը ինչպէս կարող է ներգործ-
ել այնպիսի մի ժողովուրդի վրայ, ծառայել նրա
զարգացմանը, երբ ժողովուրդը չի անկան անշար-
ժութեամբ և արդարութեամբ պատած, չը գիտէ իր
ինչ լինելը, չը գիտէ որ մի կառավարութեան պար-
գիծած ազատութիւնը չէ կարող միանգամայն լու-
սաւորութիւն մտցնել տգէտ և մոլեռանդ ժողովուրդի
մէջ։ Ժողովուրդը պէտք է լինի իր մէջ ազատու-
թեան դաղափայր մտցնել, առանց մի ժողովուրդի
իրան մէջ ազատութեան, չէ կարող ստեղծել ա-
զատ կառավարութիւն։ Հետևապէս և Թիւրքիայի
վրայ շատ թէ քիչ տեղեկութիւն ունեցող անձը չէ
կարող հաւատալ, որ նորա կառավարութիւնը որ-
քան և սահմանադրական անուն կրէ, կարողանայ
տարբարել և ընդունիլ տալ ժամանակակից բա-
ղաբար ասիւն սովորական, մեղեանդ, աղիւս-
թեան մէջ ընկած ժողովուրդին... Թիւրքիայի համար
ոչ թէ միայն նոր ստիճանի գաւի վրայ նստելը

անհասաւոր է, բայց և ինքն պետութեան տե-
ղութիւնը և կենսը տարակուսելի է։ Թիւրքիան
նախկին ստիճանին դաճելով անկող և նորին
նստեցնելով, իրան սահմանադրական նրաւորա-
կելով, կարծեց թէ դորանով մեծ հարուած տուեց
Ռուսիայի քաղաքականութեանը, կարծեց թէ զար-
մացրեց ամբողջ Եւրոպան, բայց դորանով նա
աւելի էլ ընկաւ Անգլիայի ձեռքը։ Անգլիան իր շա-
հերի համար Թիւրքիային էր ձեռքին խաղալիկ
չինքն, հետեւեց պարսափ տալով Ռուսիային, որ-
պէս թէ առանց իր սուրբ գործածելու, քաղաքա-
կանութեամբ յաղթեց... Գաւի մի Թիւրքիայի այդ
փոփոխութիւնը չը կար, 1856 թիւ դաշնադրու-
մը երկար ժամանակ լուս մնալուց յետոյ, տե-
սաւ որ երեք հիւսիսային տէրութիւնների կայսե-
րածողով մէջ ընդունված վճիռները գուցէ իր
շահերին հակառակ կը լինեն, — սկսեց յայտնապէս
պաշտպանել այդ դաշնադրութիւնը և Թիւրքիայի
անկախութիւնը, յայտնելով որ ոչ որ իրաւունք
չունի Թիւրքիային դիպելու առանց նորան, մի և
նոյն ժամանակ գաղափարի կերպով քաղաքական յա-
կարծակի փոփոխութիւնը դուրս բերելու։ Բայց ինչ
պտուղներ տեսնաւ Թիւրքիայի համար այդ կեր-
պարանափոխութիւնը, — ոչինչ, և ընդհակառակն
աւելի վատ հեռանկարներ ունեցաւ։ Նշմարիտ է,
նոր ստիճանի գաւակայութիւնը և սահմանադրու-
թեան յայտնելը ժամանակաւորապէս յափշտակեց
Թիւրքիայի բոլոր հպատակ ազգերին, կարծեցին
թէ Թիւրքիայի վիճակը բոլորովին բարեկարգու-
կաւորուել էր, որ այն օրը մինչև 11 դուրուշի
էր իջած, յանկարծ մի օրվայ մէջ 20-ի բարձրա-
ցաւ, ամենքը հաստատ յոյս ունէին, թէ ապստամ-
բութիւնը կը վերջանայ և այնուհետև ընդհանուր
խաղաղութիւն կը տիրէ։ Բայց բոլոր յոյսերը ան-
ցաւոր էին... Թիւրքիան կրկին և աւելի միծ
վտանգի մէջ ընկաւ, կոնստանդու կրկին իջաւ և
այսօր 12 դուրուշի վրայ է կանգնած, ապստամ-
բութիւնը օրեց օր ընդարձակվեց, Սերբիան և Չեռ-
նոցօրիան Թիւրքիային պատերազմ յայտնեցին։
Այժմ Անգլիան յանկարծ ուրիշ ընթացք բռնեց,
աղաղակեալ որ ինքն պէտք է չէզոք մնայ և հրա-
պրելով մնացած եւրոպական պետութիւններին էլ
իր օրինակին հետեւելու։ Բայց ո՞վ է երաշխաւոր
որ անգլիական հասարակական կարծիքը ձայնը,
լրագիրների յօդվածները և պարլամենտի մէջ պա-
վող դեղեղին ձայնը անկող չեն... Լսում ենք որ
անցեալ օրերը և Պառլից աստիճանական չոցնա-
ւով հայրենիք վերադարձող բաղմաթիւ չէրօգոր-
ցիներ և խորվառներ ճանապարհին լուսվեցան մի
անգլիական նաւից, և նաւապետի հրամանով այդ
բոլոր քաջերը, որք դնում էին իրանց հայրենի-
քին օգնելու, խեղցին զէնքերը, որոնց քանակու-
թիւնը հասնում էր մինչև 40,000 կտոր։ Այդ բո-
լոր զէնքերը և Պառլի ուղարկվեցան — Պառլի-
բաղմի մէջ առաջինների յաղթութեան մասին կերե-
ւայ, որ տեղիս լրագիրները չափազանցութիւն էին
անում սկզբներում, իսկ յետոյ քանի մի օր է լը-
սութեան են տուել։ Նրանք է որ սերբիացիներն
էլ ունեցան մի քանի աղողութիւններ։ Բոլորիան
որ պալմոնական ուրիշ գաւառների պէս ապրե-
տաւրեւած է, անհամբերութեամբ սպասում է սեր-
բիական զօրքի գալուստ։ Մինչև այժմ Թիւրքաց
կառավար զօրքի թիւը հասնում է 15 հազարի,
որի մէջ կան 2000 սօթիմաներ, կան և հայեր և
յոյներ։ Բայց հայերի համար կառավարութիւնը
խնդրել է պատրիարքից, որ ծառայեն որդէս ու-
սիականներ, որովհետև բոլոր ուսիականներ 5 հա-
հազարի չափ զէնք վերցնելով, պատերազմական
դաշտ են ուղարկվել և ուրեմն հայերը նրանց թիւը
պէտք է լրացնեն։ Բացի սուրանից ամեն տեղ Թիւր-
քիայում ճանդանակութիւն է բացված ի նպաստ
պատերազմի։ Տաճիկները չեն խնայում իրանց վեր-
ջին լուծան, տալիս են մինչև անգամ իրանց քան
արծաթեղէնները։ Ստորագրվում են և քրիստո-
նէաները։ Մինչև այժմ և Պառլի մէջ ճանդանա-
կութեամբ ժողովվել է 7758 լիւրա, իսկ Զօլուսիա-
յում մինչև 101,750 դուրուշ։ Բաղդադի զօրաբա-
նակը որ իր հեռաւորութեան պատճառով չէ կա-
կարող մասնակցել պատերազմին, ասում են իբր
թէ ընտանիք է տէրութեանը իւրաքանչիւր զինու-
թականի մի ամսականը։ Այսօր Նեղիցուտի խե-
ղիկից օրպէս օգնութիւն է, Պառլի հասած են 4000
զօրք որ չուտով ուղարկվելու է պատերազմը
դաշտը, նոյնպէս խեղիկը ուղարկել է 4000 դա-
միւր բրինձ, իւրաքանչիւրը 70 հոկտանոց (հոկտան
3 ֆունտ է) և զէնքերի մեծ քանակութիւն։

ՆԱՍՏԱ ԶԻՆԵՐԻՍՏԻՍ

Լուգանո, 13-ին յուլիսի 76.

Այս անգամ թողնելով մարդկերանց հասարա-
կութիւնը իր ձգտումներով, վէճերով և պատե-

րազմներով, դիմում եմ պարզ և սքանչելի ընու-
թեանը։

Արձակուրդներն առնելով ես ահա մի քանի օր է
որ գտնվում եմ Զօլուսիայում։ Ճանապարհս եր-
կար չէր, բայց ոչ անհետաքրքիր։ Ստորագրու-
ղէպի Լուցերն երկաթուղին բերում է հինգ ժամվայ
մէջ։ Նշանակը յաջող չէր որ օգուտ քաղեմ Ռիդի
մարի այն երկաթուղից, որ ամենին յայտնի է
գնեաւ անուշով և նախադասեցի տեսել աւելի
դաւաւոր տեսարաններ, անցնելով Գօթհարդը,
որի յարմար ճանապարհը կապում է Լուցերն, Ուրի
և Տիւրիս զօլուսիայի կանտոնները։ Այս ճանա-
պարհը որի շնորհիւնք այնքան ժամանակ—մօտ
12 տարի—և այնքան փող նստեց, չուտով կրկին
թողած կը լինի, եթէ իր ժամանակին վերջացած
կը լինի ստանկի շնորհիւնք։ Անկախած մեծ
ժարմարութիւն կունենայ անցնել երեք ժամվայ
մէջ այն ճանապարհը, որի վերաւ այժմ գործ են
դնում մօտ 14 ժամ, բայց ճանապարհորդները
կը դրկեն այն սքանչելի տեսարաններից, որոնք
առկիմ ունեն այժմ վայելելու Գէօշենեն (Gösch-
enen) և Այրօլօ (Airolo) կայարանների մէջ։ Այս
երկու կայարաններն են այն վերջնական կէտերը,
որոնք կը կապվեն 1880 թվականի համար խոս-
տացած տունկի միջով, որը պիտի ունենայ մօտ
16 վերստ երկարութիւն... Տեսն և վեց վերստ
պիտի անցկենայ երկաթուղին գետին առկ փորած
ճանապարհի միջով, երկու վերստ առկ քան թէ
անցնում է այժմ Մօն-Մերին երկաթուղին...

Բայց թողնեմ առ ժամանակ տունկի հարցը,
որի մասին առկիմ կունենամ մի ալ անգամ խո-
սելու աւելի մանրամասն կերպով, իբրեւ մի հարցի
վերա, որ այժմ հետաքրքրում է ոչ միայն ճար-
տարապետներին, այլ և ամբողջ Եւրոպան, որով-
հետև նա դառնալու է մի նոր միջոց աւելի յար-
մար միջազգային յարաբերութիւնների և առանց
նշանակութեան չի մնայ Զօլուսիայի համար։

Գաւառներ Գօթհարդի այժմանց դրութեանը։

Ամենաբարձր Կէտը, որին հասնում է ճանա-
պարհ մօտ 7000 ոտնաչափ բարձրութեան վերա
է գտնվում ծովի մակերևութից հաշուելով։ Բայց ինչ
տարբերութիւն օդի սառնութեան մէջ այստեղ և
կովկասի սարերի նոյն բարձրութեան վերա։ Գա-
յայտնի իրողութիւն է, որ կովկասի մէջ մշտնջե-
նաւոր ձիւնի գիծը շատ աւելի բարձր է, քան թէ
Ալպերի վերա և այս պատճառով դարձանալի չէ, որ
այն բարձրութեան վերա, որին հասնաւոր գտնվում
է օրինակ Սեանայ ծովը (մօտ 6300 ոտնաչափ) այս-
տեղ արդէն բաւական ցուրտ է։ Գօթհարդի բարձր
անցքի վերա գտնվող լճակները դեռ ես տարվայ
այս և կանախիկն սառած են և միայն տեղ տեղ
երևում էին հալվող սառուցի կտորներ։ Գօթհարդի
լճակների ջուրը այնքան սառն է, որ նրա մէջ չեն
կարող ապրել ձկնիկներ ոչինչ տեսակների, մինչ որ
մեղ յայտնի է որքան հարուստ է ձկնիկներով Գէօշե-
նայ լճակը։ Մենք սաստիկ մտած էինք Գօթհարդի
բարձրութեան վերա և ճանապարհորդներին մեծ
մասը մարմին գոնեաւ ներքին տաքութիւնը պահ-
պանելու համար, ստիպվեցանք դիմել մի փոքրիկ
բաժակ օդի։ Եւ դա էր յուլիսի 12-ին։ Բայց այդ
քաջութիւնը որ մենք ցուց տուինք ցուրտ հաճ-
րեւելու համար, չուտով վարձատրվեցաւ մի ժա-
մից յետոյ մենք արդէն գտնվում էինք ամենա-
փառաւոր խաղաղական երկրից թափ և վայելում
էինք շքեղ խաղաղական բուսականութեան գեղեցի-
կութիւնը։

Համեմելով Բիասկա (Biasca) երկաթուղու կա-
յարանին, մենք վայելում էինք մի մեղմ երեկոյ,
որ յիշեցնում էր զարնան այն գեղեցիկ երկրաները,
որ դժբաղդապէս այս տարի չունեցանք, երկար և
սաստիկ ձմեռվայ պատճառով։ Բիասկայից սկըս-
վում է երկաթուղու այն թիւ շարունակութիւնը,
որ պիտի ճամանակով Գօթհարդի հետ միաւորվի
և կապի հիւսիսը Միլանից հեռ։ Բայց երկաթու-
ղու և այս ճիւղը վերջացած չէ և Լուգանօ հա-
նելու համար պէտք է մի կայաններից կրկին փոստի
կառք նստել։ Փոստի կառքը վատ միջոց չէ մի
երկրի տեսքի հետ ծանօթացնելու համար և նա
էր պատճառ, որ ես յարձարութեամբ կարողացայ
վայելել թէ ընտելութեան և պատմական յիշատակ-
ները, որք այստեղ, Տիւրիս գետի ձորում արտա-
յայտվում են թէ հին ամբողջական մնացորդներով և
աւերակներով, թէ առանձնապէս մատուցելով
և զանգակաւորելով, որոնք հպարտ կերպով դուրս
են նայում կալալի և շաքանակի (Kastanien) ծա-
ռերից բաղկացած անտառներից և տիրապետում
են դրկիմ անմասելի ժայռերը, իրանց բաղմա-
թիւ ջրվաժնիով, որոնց ջուրը ժայռից ժայռ ընկ-
նելով, վայելելով և փրկելով, վերջացելու մէջ
կայանում է իբրեւ փոքի, իբրեւ սպիտակ մի ամբ, որ
անդադար գոյանում է, ընդունելով անդադար նոյն
գծադրութիւններ...

Արքան աւելի հեռու էինք գտնում Գօթհարդի

սառն և անհիւրընկալ բարձրութիւններից, այնքան
աւելի տաք էր լինում օդը և քաղաքանակ էին
դառնում տեսարանները, ընտելեւոր աւելի մատ-
չելի մարդու մշակութեանը, մինչև որ վերջը մը-
տանք այնպիսի տեղիք, որը մարդու աշխատանքով
կերպարանափոխվել էին անմասն պարտեզների,
իսկ սարերը հեռաւորութեան մէջ դրանց համար
չլրանալի դառնալով, նպատակում էին մօտակայ
առաքիւնները աւելի գեղեցիկ ներկայացնելու նա-
յոյի աչքին։

Ճանապարհը շարունակ անցնելով թիւնիներից
և որթիքից կազմված պարտեզներով, որոնց միջից
դուրս են նայում առանձնապէս սիրուն վիլաներ,
յանկարծ նոր գեղեցիկութիւն է ստանում մեր
առաջ թայվում է բայ կանանց գոյնի Լուգանօյի
լճակը, չլրացաւ խոյտ անտառներով ծածկված
սարերով, որոնցից մէկը՝ Monte San Salvatore
իւր բարձր մատուռով տիրապետում է ամբողջ
չլրանալից։

Այս տեղերում ամբողջ կենսքը յիշեցնում է
Խալիսան՝ ամեն երեսի վերա երևում է մի տեսակ
անհոգեթիւն և մի և նոյն ժամանակ տեղացի
բնակիչներին յատուկ է ընդունակութիւնը քչով
բաւականանալ, որ յատուկ է և Խալիսացուն։

Վաղուց է որ գրեթէ ամբողջ հարաւային Գեր-
մանիայում իտալական մշակները երկաթուղիների
շնորհիւնքներում և առհասարակ ծանր աշխա-
տանքների մէջ շատ յաջող միջոցներ են անում
այլազգի մշակների հետ, նախ որովհետև շատ տո-
կուն են աշխատում և մանաւանդ որ բաւակա-
նանում են աւելի փոքր վարձով։ Եւ այդ փոքր
վարձին էլ նրանք ամենափոքր մասն են դործ
դնում իրանց անձի վերա, այլ զխաւարապէս ու-
ղարկում են իրանց ընտանիքներին, որոնց տանն
են թողել, իրանք գնալով օտարութեան մէջ աշ-
խատանք որոնելու։

Ս. Արծրունի

ՆԱՍՏԱ ԵՐԶՐՈՒՄԻՑ

Յուլիսի 1-ին

Թիւրքիայի կենտրոնական կառավարութիւնը և
Պառլի մէջ ամենին չը գիտէ թէ ինչ է կատար-
վում գաւառներում, մանաւանդ Թիւրքիայի ա-
սիական գաւառներում։ Այդ հեռու երկրներում
ժողովուրդը ստորակ է դարձել պաշտօնականների
ձեռքում։ Մի նախադասական փայա տարեկան մի
յայտնի գումար հարկ պէտք է տայ տէրութեանը
իր կառավարված փաշայութիւնից։ Թէ ինչպէս է
հաւաքում նա այդ հարկը, ինչ միջոցներով, ինչ
պաշտօնականների ձեռքով, — տէրութեանը փոյթ չէ։
Արդեւ փաշան ուղիղ այնքան է հաւաքում, որքան
հասնում է տէրութեանը, թէ աւելի, և աւելորդը
արդեւ իր զրպանն է դնում։ — այդ մասին ոչ ոք
չէ հարում։ Ինչպէս բարձր, կենտրոնական տնո-
ւիւնը չէ հակում նախադասական փաշայի գործու-
նելութեան վրայ, միայն թէ հասցնէ իրան հարկի
տարեկան յայտնի գումարը, այնպէս էլ փաշան իր
կողմից հող չէ տանում թէ իրան ստորադրեալ
պաշտօնականներ ինչպէս են հաւաքում հարկը ժո-
ղովրդից, արդեւ իրանք էլ հարստանում են այդ
գումարներից հաւաքելով, արդեւ կաշառքներ են
առնում, կամ ուղարկի կողպատում են ժողովուրդ
դը, — այդ մասին նա չէ հոգում։ Այդպիսով տե-
րութիւնը հարկի տարեկան քանակութիւնը ան-
պատճառ պահանջում է փաշայից, չը նայելով թէ
այս ինչ կամ այն ինչ տարի կարող է անբերու-
թիւն սով պատահել։ Վայ այն փաշային, որ կը
համարձակվէ յայտնել տէրութեանը, թէ այս տարի
անբերութիւն է եղել իր նախադատը՝ նրան իո-
կայն կը կապանածին, թէ հարկերից հաւաքած փո-
ղրի մեծ մասը իր զրպանն է կամենում դնել
փաշան, որին տուած է իրաւունք իր նախադի-
հալով ապրել, կողպատում է իր կառավարված
ժողովուրդը որքան կարող է, նրա ստորադրեալ
պաշտօնականներն էլ, որք շատ քիչ և անկանոն ու-
ճիկ են ստանում, շատ անգամ ամբններով իրանց
ուճիկը չեն ստանում, իրանց կողմից կողպատում
են ժողովուրդը։ Հասկանալի է որ ժողովուրդը
աւելորդ է համարում աշխատել, արդիւնաբերել,
որովհետև որքան և աշխատէ, որքան և արդիւ-
նաբերէ, — բոլորը պէտք է պաշտօնականներին տայ։
Երբ պաշտօնականները տեսնում են թէ գիւղացին
փոքր ինչ ունեւոր է, նրանից այնքան կանան, որ
նա կաղքատանայ։ Եւ այդ տեսակ մօնազօրական
հարկանաւորութեան եղանակին զոհ չեն միայն քրիս-
տոնեայ հպատակները, ոչ—այդ զէպերում միջ
թիւրքաց տէրութեան ներկայացուցիչները ամենքի
հետ հաւատարմապէս են վարվում։ Այդ կողմից մի
և նոյն է՝ հայ, հրէայ, թուրք, յոյն լինել հպա-
տակը... Այդ վրդովից թիւրքաց տէրութիւնը կա-

տարեկա հաւասարութեան ակտիւ վրա է հիմնուած... Վրոյնքի և զաւանթեան անհատաւորութեան, քա-
ղաքական անհատաւորութեան, բայց մի և նոյն
մասնակի հաւասարութեան, որ և նոյն կատա-
րեալ հաւասարութեան... Թիւրքաց ամբար, մի
քանի նահանգներում անբաժնի հարստահար-
ված է, որ հաւաստացեալ են որ և իմ է մի շար-
ժում սկսվել, որի արդիւնքներն մէջ, մանկուսա-
կան ազգայնականութիւնը նրանց հետ կը միանար
տէրութեան դէմ պատերազմելու համար: Այդ դեռ
բաւական չէ: Մի որ և նահանգապետ փաշա
յանկարծ է: Պարսկի իր պաշտօնից հրաժարական է
ստանում: Կարծում է, որ նա պատում է մինչև որ
նոր փաշան կը գալ, նրան իր հայրենիքը, գործերը,
զինատուները յանձնելու համար: — ամենին աչ...
Նա իսկոյն հրամայում է ժողովրդից մի ամբողջ
տարակա հարկը կանխիկ հաւաքելու, ճանապարհ է
ընկնում դէպի մի որ և է ծովափը քաղաք,
ճրագիցման կամ Զմիւռնիա, իր հետ տանելով ժո-
ղովրդից մէկ ամբողջ տարակա կանխիկ հաւաքած
հարկը, նստում է չոզնաւը և գնում է Կ. Պոլս:
Հասն անգամ երկու նաւերը, որոնցից մինի վրա
նստած է նախկին նահանգապետը և երկրորդի
վրա նոր նահանգապետը փաշան միմեանց պատա-
հում են ծովի մէջ և մէկ մէկու մօտով անց-
նում են: Այդ գործերի յանձնելը, ոչ հայրենիքի
դրամով կայ: Նոր փաշան դալիս է իր նահանգը,
չէ գտնում ոչ թղթեր, ոչ գործեր, ոչ հայրենիք,
ոչ դիւանատուն: — և չէ էլ պահանջում, չէ էլ
մտածում անգամ այդ բաները պահանջելու:
Նա իսկոյն հրամայում է հարկեր ժողովել: — և
նախկին փաշայից ամբողջ տարակա ժողովրդից
կանխիկ հաւաքված հարկը, նորից հաւաքում է
նոյն ժողովրդից, նոյն տարակա հաշուով: Այս
ինչ դրոշման մէջն են և բոլոր հպատակ-
ները Թիւրքիայում... Եւ դեռ կան անամօթ, փր-
յանդոյն, իմամներ մարդիկ, որք ասում են թէ
«Հայերի համար լաւ է Թիւրքիայում»: Այդ տե-
սակ դրոշման մէջ ամենաբողոքական, ամենահա-
ճարիկ, ամենանախնդիր անգղաթիւնը կը դառնայ
վախկոտ, հուս, սարսկ, խորեքայ, անարդարական,
անապահու: Ամենատարաբնուի կամայականութիւն
են գործում ամենատարա, ամենապայմանի ստը-
կութեան մէջ են պահում, — և յետոյ դարձանում են
թէ ժողովարդը բարոյապէս ընկնում է... Միայն
ազատութիւնը կարող է մարդուն ազնուցնել:

Թիւրքիայի ամբողջ զաւանթեան երկրագործ
ժողովրդի անտեսական այդ անմիջական դրոշման
և ուրիշ պատճառ կայ: Երկրագործը աւելորդ է հա-
մարում արդիւնաբերել աւելի քան հարկատու է
իր ընտանիքի համար: Ինչ անէ որ աւելորդ ար-
դիւնաբերէ, նա չէ կարող ոչ մի տեղ վաճառա-
հանել, որովհետեւ երկրի մէջ չը կան յարաբերու-
թիւններ, ճանապարհներ: Աւելորդ որ արդիւնա-
բերէ, այդ աւելորդ կամ պէտք է պաշտօնականից
յափշտակել, կամ պէտք է փոխ:
Հասն տեղ, շատ զաւանթեան դիւղային իր
կենտրոնում փող, գումար տեսած չէ: Նա ամեն
բան ընտելեան արդիւնքներով է փոխանակում,
ընտելեան արդիւնքներով հարկ է տալու տէրու-
թեանը:

Սրանք են պատճառները, որ անպայման պըտ-
ղաբեր և հարուստ երկրները, ինչպէս Մուշի և
Վանի նահանգները, հայերը անգաղար զաղթում
են: Այդ նահանգները ունեն հարուստ հող, զեղե-
րիկ և հայի կազմակերպին յարմար կլիմա, հիւանդի
ջրեր, հանքային հարստութիւններ, առատ բուսա-
կանութիւն, — բայց հայը զաղթում է, անգաղար
զաղթում է: Հայերից շատերը վաղուց կը գաղ-
թէին Հայաստանի այն մասը որ Ռուսաց պետու-
թեան մասն է կազմում: Երեսնեան նահանգը,
եթէ այդ նահանգի անտանկի կլիման չը լինէր,
եթէ նա չունենար այն անպիկ տարածութեան
ամբողջ անբաժնի, անշուր հողեր իսկ եթէ օրինակ
Ռուսաստանին պատկանէին Վարդի, Էրզրումի,
Վանի և Մուշի հարուստ նահանգները, հայերը
որք զաղթել են Հայաստանից զօրս փոքր-Վանի
ուրիշ երկրներ, որք օրինակ Սեբաստիայի պէս
անպիտան կլիմայում են տարում: — հայերը մեծ
մասամբ և իսկոյն կը վերադառնային Հայաստան,
զիտեանով որ Ռուսաց արքայախոյնութեան տակ
կրկին չունէ կը քաշեն, խաղաղ կապեն և կաշ-
խատեն: Մինչև որ Ռուսիայի հայերի թիւը տա-
րից տարի աճում է և մի փոստ եղած չէ որ
Ռուսաստանից հայ երկրագործ ընտանիքը գաղ-
թած լինէր: — Թիւրքիայից և Պարսկաստանից հա-
յերը անգաղար զաղթում են և չը զաղթողների
թիւն էլ տարից տարի իր բնակութեան տե-
ղում պահպանում է, անհետանում է: Կամ մահ-
մետականութիւնը ընդունելով կամ տոկոյ, հարս-

տահարութեանց, հիւանդութեանից... Միայն
հայերի թիւամբները կարող են դիմամբ հաւա-
տացնել որ հայերի դրոշմները լաւ է Թիւրքիա-
յում, այն նպատակով, որ հայերի մեծ մասը, 3
միլիոն հայ ժողովրդը վաղ առ փոքր անհետա-
նայ, կորչի: — այնպէս որ ուրիշ տեղեր ցրված հա-
յերը էլ ազգ չը կազմեն, այլ մի աննշան իտուր
զառնան: Կ. Պոլսի հարստացած հայերը գուցէ և
ցանկանում են Թիւրքաց տէրութեան մէջ մնալ,
բայց Հայաստանի հայերը, Թիւրքիայի ամբողջ
զաւանթեան հայերը մեծ ձգտում ունեն դէպի
Ռուսաստանի հետ միանալ:

Ն.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Վերջին լուրերը հաղորդում են որ Զերնոգո-
րայի գործը շարգված լինելով Թուրքերից, ինչան
Նիկոպոլսը իր գործով հեռացաւ Զերնոգորայի
ներքին գաւառները: Թուրքերը հետեցին չերնո-
գորցիներին և Գրաիօլօյի մօտ ճակատամարտ
եղաւ, որտեղ Թուրքերը բոլորովին շարգվեցան:

— Հեռագիրը հաղորդում է որ չերնոգորցիները
բազմաթիւ զիններ առան Թուրքերից և 5 կրուպի
թողնալով:

— Ֆրանսիական լրագիրները հաղորդում են որ
Սկնաուր չերնոգոց այն օրերը, որի հիման վրա
միայն պետական համալսարաններին պիտի թող
տրվել գիտական աստիճաններ տալ ուսանողնե-
րին: Ուրեմն կղերական կուսակցութիւնը Ֆրան-
սիայում դարձաւ յաղթող դուրս եկաւ և կաթո-
լիկ համալսարանները իրաւունք կունենան իրանց
ուսանողներին գիտական աստիճաններ տալ:

— Կ. Պոլսից գրում են լրագիրներին որ սուլթան
Մուրադ ծանր կիրպով հիւանդ է: Նրա վրա երե-
ւում են խեղդարութեան նշաններ:

ՍԽԱՆ Մշակու Ձ 26-ի մէջ տպված Կ. Պոլսի
նամակում մի սխալ մտաւ: Խոսելով հայ և բոլ-
գար երկու վաճառականների վրա որք ընծայել են
Թիւրքաց տէրութեանը մեծ գումարներ, ասված
50,000 ոսկի, և 56,000 ոսկի, բայց միշտ գու-
մարները եղել են 50,000 դուրուշ և 50,000
դուրուշ:

Խնդ.

ՄԱՍՆԱՌՈՐ Ե ԴԱՍԱՏՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԲԱ-
ԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԱՌԵՏԻՍԿԱՆ ԲԱ-
ՓԱՆՄՈՒՆԻՔՈՎ. յայտնում է, որ աշակերտ-
ների ընդունելութեան հարցաքննութիւնները
սկսվելու են օգոստոսի 16-ին, իսկ ուսումը
սեպտեմբերի 1-ից: Ուսումնարանը բաց է ա-
նում 3-րդ դաստանը: Ուսումնարանի ուս-
ման ընթացքը համապատասխան է տէրու-
թեան ընթացքին:

Մանրամասն տեղեկութիւններ մասին
խնդրում են զիմե Նոյն իսկ ուսումնարանը:
Ուսումնարանը գտնվում է Թիֆլիսում Սա-
ղոյալայ փողոցում, Էլիամիլօսկայա Վ. փողոցի
զինաց, Շաղինօվ տանը, № 34:

Գարրիկ ԹԱԽԱՔԱՂՈՎ

Թ. ՄԵԼԻՔԱՆԵՎԱՐՈՎ

2 (2)

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Հրատարակուցաւ ՓԱՐՈՍԻ Հինգերորդ

տետրը, զինն է 50 կոպ. արծ.

Վաճառին նաև

ՓԱՐՈՍԻ տետր Ա. (1872). զինն է 50 կ.

ՓԱՐՈՍԻ տետր Բ. (1873). զինն է 60 "

ՓԱՐՈՍԻ տետր Գ. (1874). զինն է 50 "

ՓԱՐՈՍԻ տետր Դ. (1875). զինն է 40 "

Յանկայողըն ստանալ պարտ են զիմե
առ հրատարակին Զարմայր Մսերեանց (Мос-
ква, Меньшикова башня, домъ Милова-
нова).

2 (2)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Совѣтъ Старшинъ Тифлискаго Ремес-
леннаго Собранія просить г. г. домо-
ладѣльцевъ желающихъ отдать въ наемъ
квартиру подъ помѣщеніе Собранія, прис-
лать свои адреса не позже 28 іюля въ Соло-
лакскаго улнцѣ, парикмахеру Григору. При-
чемъ Совѣтъ Старшинъ считаетъ необходи-
мымъ предупредить, что квартира для помѣ-
щенія Собранія должна удовлетворить слѣ-
дующимъ главнымъ условіямъ: а) Въ Квар-
тирѣ должнъ быть залъ, въ которомъ можно
было бы устроить сцену для домашнихъ спек-
таклей. б) Должно быть достаточное помѣ-
щеніе для устройства столовой, библіотеки,
дамской уборной, бильярдной и кухни. Ост-
альные условія о цѣнѣ и срокѣ контрактовъ
будутъ разсматриваемы въ совѣтѣ старшинъ,
по взаимному соглашенію съ домохозяевами.

Տէրութեան հրամանով բացել եմ քա-
ղաքում գրասենյակ խնդրում եմ պ. պ. հեղե-
նաներին ուղարկել իրանց հեղեկականութիւն-
ներին մեզ վաճառելու ըստ օրինի զեռույն
հաշիւով, այս հասցեով:

Въ Шуму книжный магазинъ Мирзэджанъ
Мугдиса Аюповъ. 1 (2)

Դուրս եկաւ մամուլ տակից բժիշկ Բօկի
շարադրութիւնը

Գործնական իրաւանք երկխանի մասու-
րական և ֆիզիքական կրթութեան համար
Թարգմանութիւն Ա. Արասխանեանցի: Գինն է
30 կոպէի. ծախվում է Թիֆլիսում պ. Գրի-
գորեանցի և ընկ. գրափառանդում, ուր և
կարող են զիմե ցանկացողքը:

2 (2)

ԹԻՖԼԻՍԻ ԻԳԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻՍԻ ՈՒԹԵ-
րորդ դաստան մի ԱՇԱԿԵՐՏՈՒՂԻ
համեմուն է ԴԱՍԵՐ տալ: Հարցնել Մշակու
խմբագրատան մէջ:

Воспитанница восьмого класса Тифлис-
ской ЖЕНСКОЙ ГИМНАЗИИ желаетъ да-
вать уроки. Адресъ можно узнать въ ре-
дакціи „Мшагъ“ 3 (5)

1 (3)

ԱՄԵՆԱՀԱՍՏԱՏ ՄԻՋՈՑ

ՓՈՔՐ ԵՒ ՄԵԾ ՄԿԱՆԵՐ, ԽՈՒՐԻՂԵՐ ԵՒ ՄԻՋԱՆԵՐ ՈՉԶԳԱՆՆԵՐՈՒ
ԻՍՍ ԳՈՒՏՄԱՆ ԲԻՍԻՔՈՍ ՊԵՇԵՐ

ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅՐԱՅՐԻՉ

Որ մի քանի արտասանական պա-
Պատիւ ունեւ առաջարկել թէ հասակութեանը, թէ պ. պ. վաճառականներին ինձա-
նից հնարած ամենատարա, ամենապայմանի ստը-
կութեան մէջ են պահում, — և յետոյ դարձանում են
թէ ժողովարդը բարոյապէս ընկնում է... Միայն
ազատութիւնը կարող է մարդուն ազնուցնել:

Այդ միջոցները արժանապատիւ Մուկիայի բազմա-
վանեան հանգիստում 1872 թ. ին մեծ առժամկալ մե-
ղալի և Վիկտորիա աշխարհահռչակում 1873 թ. առա-
ջադրութեան համար մեղալի (Fortschritts—Medaille):

ՀԱՆՐԱՊԵՐԱՆՈՒՄ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏ
ԵՐԻՊՈՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Սեւ քանակութեամբ անտոյններին զիջում կը լինի:

ԳՆԵՐԸ

Մի երկ և իւրեղանքի զեռույն մի սրտակի հա-
մար 1 ր. 50 կոպ. փոշին ու ուսանողներին, զիցի
միջոցներին և լուսնի զեռ 1 րոպը Սորա հետ
հարկատու է անուն և գաւառակի փոքրիկ մե-
ղաներին իւրաքանչիւր 60 կոպ.

Հեղուկ բաղնիքների զեռ մի սրտակ 1 ր.

Այդ միջոցը ունի անուշ համ, լիճիկ չէ անում և յան-
կարծակի է ներգործում, որի համար երաշխաւոր է
զիտուր Գեւոր.

Հատուտ միջոց կՈՇՏԵՐԻՆ և կաշու կոշտութիւն-
ների զեռ, մի սրտակ 60 կոպ.

Գլխուրդ զեռ ԹԻՖԼԻՍԻՍԻՍ պ. ԼԱՆԿՈՒ
մուգիկային մազադրում, Գլխուրդ փողոցում,
Արժանաւ ամար ՎԼԱԴԻԿԱՎԼԱՍՈՒՄ պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ ՍՏԱՎՐԱՊՈԼԻՍՍ պ.
ԿՈՒՐԻՆԶԵԿԱՍՈՒ մօտ:

Օտարաբարաբայիցներ թող բարեհաճեն ճանապարհի ծախար վճարել ինչպէ միջոց-
ների ուղղակիութե համար: Կարող են թէ փողով, թէ փոստի մարկաներով:

24 (50)